ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

4 օգոստոսի ուրբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

114
(2780)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՈՎՔԵ՞Ր ԵՆ ՄԱՄՆԱԿՑԵԼ ՔՊ ԴՐԱՄԱՀԱՎԱՔԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ հուլիսի 31-ին տեղի ունեցած «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության դրամահավաքին Հայաստանի բոլոր խոշոր գործարարներին հանձնարարված է եղել կլորիկ գումար հանգանակել կուսակցությանը. ՔՊ-ի դրամահավաք-երեկոյին 987 նվիրատուների հանգանակությունների արդյունքում հավաքվել է շուրջ 506 532 950 ՀՀ դրամ, այսինքն՝ 1մլն 322 հազար դոլար:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ՔՊ-ին կլորիկ գումար փոխանցած գործարարների թվում է Արցախից փախած, Հայաստանում իր բիզնեսը ծաղկեցնելով զբաղված Արման Հակոբջանյանը:

Իշխանությունների «սրտի գործարար» Նարեկ Նալբանդյանը, որը հայտնի է իր աղմկահարույց գնումներով, եւս վճարել է ՔՊ ֆոնդին: Հիշեցնենք, որ վերջինս արտոնյալ պայմաններով գնել էր Մաքսային պետական կոմիտեի նախկին նախագահ Արմեն Ավետիսյանի ընտանիքին պատկանող՝ Ծաղկաձորի «Գոլդեն Փելիս» հյուրանոցը 5 մլրդ դրամով, ինչպես նաեւ նախկին վարչապետ, ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանի՝ կալանքի տակ գտնվող շքեղ բնակարանի գնորդն էր՝ «փակովի տարբերակով»:

ՔՊ-ի դրամահավաքին մասնակցած գործարարներից են նաեւ «Արտ Լանչ» սննդի ցանցի հիմնադիր Բակուր Մելքոնյանը, «Երեմյան Փրոջեքթս» ընկերության գլխավոր տնօրեն Դավիթ Երեմյանը, «Դվին» հյուրանոցի սեփականատեր Արտակ Թովմասյանը, «Վիվառո» ընկերության սեփականատերեր Վահե եւ Վիգեն Բադալյանները, որոնցից Վիգեն Բադալյանը ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի ընկերն է: Նրանք, չի բացառվում, ուղիղ իրենց անունով արած չլինեն պարտադիր նվիրատվությունը:

«Ժողովուրդ» օրաթերթը երեկ ողջ օրը փորձեց պարզել, թե որ գործարարը որքան գումար է հանգանակել ՔՊ-ին: Արման Հակոբջանյանը կտրականապես հրաժարվեց պատասխանել մեր հարցին, Նարեկ Նալբանդյանն ասաց, որ առաջին անգամ է լսում դրամահավաքի մասին, ինքը որեւէ մասնակցություն չի ունեցել դրան, Դավիթ Երեմյանը նույնպես վստահեցրեց, որ մասնակցություն չի ունեցել այդ դրամահավաքին, իսկ Բակուր Մելքոնյանը մեր հեռախոսազանգերն անպատասխան թողեց: Արտակ Թովմասյանի գրասենյակից մեզ ասացին, որ մինչեւ օրվա ավարտը կպատասխանեն մեր հարցերին, բայց դեռ որեւէ արձագանք չկա:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ, բացի նրանցից, մի քանի գործարարների վրա էլ է դրված եղել, որ որեւէ կերպ մասնակցեն ՔՊ դրամահավաքին եւ գումար փոխանցեն:

Առաջիկայում մենք կհրապարակենք նաեւ մյուս նվիրատուների ցանկը:

Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Վաղարշակ Հակոբյանն այն երիտասարդներից էր, որ «թավշյա հեղափոխության» օրերին մտերիմ էր Մխիթար Հայրապետյանի հետ, ինքնամոռաց ելույթներ էր ունենում, որի արդյունքում դարձավ իշխանության սիրելին խորհրդարանում: Ինչպես մնացած անտուն ՔՊ-ականները, նա եւս, իշխանության գալով, հիփոթեքով տուն է գնել եւ գումարներ է դիզում: Նա 2020թ. ձեռք է բերել հիփոթեքով բնակարան Երեւանի Արաբկիր վարչական շրջանում, սակայն եւս մեկ տուն է հայտարարագրել Կենտրոն վարչական շրջանում, որը փաստացի իրեն չի պատկանում, սակայն շահագործվում է պատգամավորի կողմից: Թե ում տանն է մնում, ինչի դիմաց, պատգամավորը չի գրել: Այս պահին Հակոբյանը նշել է, թե ավտոմեքենա չունի, սակայն 2018 թվականին ձեռք բերած մեքենան, ըստ 2021 թվականի հայտարարագրի, վաճառել է 7 հազար 900 դոլարով: 2021 թվականի հայտարարագրում նրա հանձնված եւ վերադարձված փոխառությունները կազմել են 30 մլն դրամ, որից 26 միլիոնը հիփոթեքի գումարն է, որը ձեւակերպված է «ՀայԷկոնոմ» բանկում, իսկ 2022 թվականի հայտարարագրում այդ դաշտում ոչինչ գրված չկա: Բանկային հաշիվների մնացորդները կազմել են 935 հազար դրամ, կանխիկ դրամական միջոցները՝ 17 հազար դոլար եւ 11 մլն դրամ: Նկատենք, որ Վաղարշակ Հակոբյանի հաշվետու տարվա եկամուտները կազմել են 8 մլն 234 հազար դրամ, որը աշխատանքի վարձատրություն է Ազգային Ժողովի աշխատակազմի կողմից: Նախորդ տարիների համեմատ՝ նրա աշխատանքի վարձատրությունը գրեթե մեկ միլիոնով աճել է, քանի որ ԱԺ տարածաշրջանային եւ եվրասիական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի պարտականություններն է կատարում: Իսկ թե ինչպես է պատգամավորի աշխատավարձով այսքան գումար եւ ունեցվածք կուտակել, իշխանական պատգամավորը խնամքով թաքցրել է: Այս առիթով կոռուպցիան բարեւներ է ուղարկել Հակոբյանին եւ Նիկոլ Փաշինյանին:

Արցախի ՊԲ նախկին հրամանատար, Անվտանգության խորհրդի նախկին քարտուղար Սամվել Բաբայանը դարձել է Նիկոլ Փաշինյանի խոսափողն Արցախում կամ արցախցիների համար: Արդեն տեւական ժամանակ է՝ Փաշինյանի քարոզչական թեզերն է առաջ տանում ու փորձում արցախցիներին համոզել, թե պետք է օգտվել Աղդամի ճանապարհից, բեռներ տեղափոխել այդ ճանապարհով, ավելին՝ երկխոսել Ադրբեջանի հետ՝ պատճառաբանելով, թե միայն այդպես վերջնական «խաղաղություն կհաստատվի»: Տպավորություն է՝ Սամվել Բաբայանն այսպիսով փորձում է իրենց կամքին հակառակ արցախցիներին ինտեգրման տանել Ադրբեջանի հետ՝ տեսնելով անգամ, թե ինչպես է Ադրբեջանը հիվանդ արցախցուն առեւանգում, տանում Կարմիր խաչի միջազգային կոմիտեի աշխատակիցների ձեռքից: Իհարկե, խաղաղությունն անհրաժեշտություն է, բայց որ ինտեգրվելու գնով այն ժողովրդի հետ, որը քեզ ատում է ու ցանկանում ցեղասպանել: Ադրբեջանում Հայաստանի նկատմամբ ատելությունը պետական քաղաքականության մաս է, ադրբեջանական դպրոցներում դեռ մանկուց են քարոզում հայատյացություն, իսկ Ադրբեջանի նախագահն էլ ամենօրյա ռեժիմով սպառնալիքներ է հնչեցնում՝ հայտարարելով, թե չկա Հայաստան, չկա Արցախ, ամենուր Ադրբեջան է: Սամվել Բաբայանը, սակայն, նրանց հետ առեւտրի եւ ինտեգրացիայի է ուղղորդում արցախցիներին:

ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը համակարգի համար շարունակում է օտար մնալ: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ շատ դատախազներ, դատախազությունում տարբեր պաշտոն զբաղեցնողներ, վարչության պետեր եւ այլք մինչ «գլխավորին զանգահարելը» մեկը մյուսին զանգահարում խորհրդակցում են՝ ինչ անել. եթե զանգահարեն ՀՀ գլխավոր դատախազին, հանդիպում խնդրեն, կմերժի՞, թե՞ կնդունի: Ասել է թե՝ գլխավոր դատախազը համակարգի զգալի մասի հետ շփվում է բացառապես պաշտոնական գրությունների միջոցով, եւ դատախազներից շատերի հետ մարդկային շփում, անգամ հեռախոսային քննարկում չկա: Դատախազության շատ աշխատակիցներ չգիտեն՝ ում դիմել, իրենց խնդիրների ու առաջացած հարցերի դեպքում ում հետ քննարկել: Ինչո՞ւ է գլխավոր դատախազը այնպիսի դիրք ընդունել, որ համակարգում շփվում է բացառապես իր մտերիմների, համակարգի նորեկների հետ, իսկ մարզային դատախազների, անգամ վարչության պետերի համար հասանելի չէ: Այս հարցի շուրջ մեկնաբանություն խնդրեցինք ՀՀ գլխավոր դատախազի խորհրդական Լուսինե Մարտիրոսյանից: Գլխավոր դատախազի խորհրդականը հերքեց «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունը՝ նշելով, որ գլխավոր դատախազի ղեկավարությամբ յուրաքանչյուր օր տեղի են ունենում հանդիպումներ եւ աշխատանքային քննարկումներ, որոնց մասնակցում են Գլխավոր դատախազության վարչությունների, Երեւան քաղաքի եւ մարզերի տասնյակ դատախազներ:

ԶՐՈՒՅՑ

Թ. ՎԱՐԴԱՆՅԱՆԸ՝ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՄԻՆ

Երեւանի ավագանու «Լույս» խմբակցության անդամ Թեհմինա Վարդանյանը չի մասնակցի աշնանը սպասվող ավագանու ընտրություններին, թեեւ տարբեր կուսակցություններից առաջարկներ ստացել է:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում այս մասին հայտնեց ինքը՝ Թեհմինա Վարդանյանը:

Ավագանու ընտրություններում նրա ֆավորիտ թեկնածուն «Լուսավոր Հայաստան» խմբակցության քաղաքապետի թեկնածու Դավիթ Խաժակյանն է: «Մի քանի կուսակցություններից առաջարկ եմ ստացել, այդ թվում՝ ինձ շատ հոգեհարազատ կուսակցությունից: Ինձ մոտ այս պահին անձի երկակիություն է, իմ մի մասն ասում է, որ չպետք է մասնակցեմ ընտրություններին, մյուս մասն ասում է, որ երկար տարիներ աշխատել եմ քաղաքապետարանում, պետք է գնամ ու իմ փորձը կիսեմ ավագանու նոր անդամների հետ: Ես գրեթե ամբողջականացրել եմ իմ մտքերը եւ կարծում եմ, որ չեմ մասնակցի ավագանու ընտրություններին, եթե ֆորսմաժորային իրավիճակ չլինի»,-ասաց նա:

-Ի՞նչ ակնկալիքներ ունեք այս ընտրություններից: Հնարավո՞ր է՝ սրանք նոր փոփոխությունների սկիզբ դառնան:

-Սպասումները պայմանավորված են երեւի թե ոչ քաղաքային ընտրություններով, այսինքն՝ Երեւանի ավագանու նոր ընտրություններով, այլ սպասումները կապված են հիմնականում աշխարհաքաղաքական փոփոխությունների հետ, որը ուղիղ անդրադառնալու է նաեւ մեր երկրի վրա: Այդ մասով ավելի ծանր իրավիճակում ենք, եւ ավագանու ընտրություններ քննարկելը, եթե սրանք լինեին արտահերթ ընտրություններ, ես առնվազն կաղաղակեի, բայց սրանք հերթական ընտրություններ են, եւ անձնապես սպասումներ չունեմ, որովհետեւ դժվարին իրավիճակ է այդուամենայնիվ: Տարբեր քաղաքական թեւեր կան, եւ որքան էլ ինձ համար ցավալի է, ես ավելի հակված եմ որոշ իշխանական կամ մերձիշխանական կուսակցություններին մեր օրերում, քան ընդդիմադիր կոչված որեւէ կուսակցությանը թեկուզ մտովի սատարելուն:

-Արդեն կան քաղաքական ուժեր, որոնք հստակ հայտարարել են, որ մասնակցելու են ավագանու ընտրություններին: Ունե՞ք ֆավորիտ թեկնածու:

-Այս պահին պետք է ասեմ, որ որեւէ մեկի համար գաղտնիք չեն իմ եւ պարոն Խաժակյանի անձնական հարաբերությունները եւ յոթ տարվա աշխատանքային հարաբերությունները: Նա իմ լավագույն ընկերներից է՝ անկախ կուսակցական պատկանելությունից, անկախ վերջինիս կուսակցական ելույթներից ու քաղաքական ելույթներից: Ես պարոն Խաժակյանին դիտարկում եմ որպես քաղաքային գործիչ առնվազն այս պահի դրությամբ, եւ եթե որեւէ կետում պարոն Խաժակյանին սկսեմ դիտարկել որպես քաղաքական գործիչ ընդհանուր հանրապետության մասշտաբով, գուցեեւ վերաբերմունքիս մեջ ինչ-որ բան փոխվի, բայց Դավիթն իմ ընկերն է, այդ թվում՝ քաղաքային ընկերը, ում հետ երկար տարիներ ձեռք ձեռքի տված կռիվ ենք տվել բոլորի դեմ: Բայց, այդուամենայիվ, ես խոսում եմ այս պահի դրությամբ իմ ֆավորիտի մասին. սա որեւէ մեկի համար գաղտնիք չէ, կարծում եմ, սպասելի է: Թե անմիջապես վաղը ինչ կարող է փոխվել, այս պահին չեմ կարող ասել:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԿՈՉ

ԱԶԱՏ ՏԵՂԱՇԱՐԺ՝ ՄԻՋԱՆՑՔՈՎ

Պաշտպանության պատասխանատվության համաշխարհային կենտրոնն (Global Centre For The Responsiblity To Protect) անդրադարձել է Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի ապօրինի արգելափակման հետեւանքով Լեռնային Ղարաբաղում ստեղծված հումանիտար ճգնաժամին:

Կենտրոնի տարածած հաղորդագրության մեջ նշվում է, որ ավելի քան 7 ամիս Ադրբեջանն արգելափակել է Լաչինի միջանցքը՝ Լեռնային Ղարաբաղը Հայաստանին կապող միակ ճանապարհը՝ հարուցելով հումանիտար ճգնաժամ:

«Շրջափակումը Լեռնային Ղարաբաղում ապրող շուրջ 120 հազար հայերի, այդ թվում՝ 30 հազար երեխաների, զրկել է կենսական նշանակության այնպիսի ռեսուրսներից, ինչպիսիք են սնունդը, դեղորայքը, էլեկտրականությունը, վառելիքը: Հուլիսի 28-ին Հայաստանի կառավարությունն Ադրբեջանին մեղադրեց շուրջ 400 տոննա հումանիտար օգնությունը Լեռնային Ղարաբաղ հասցնելուց հրաժարվելու համար: Կարմիր խաչի միջազգային կոմիտեն հուլիսի 25-ին տարածած հայտարարությամբ հաղորդեց, որ, չնայած համառ ջանքերին, ԿԽՄԿ-ին վերջին անգամ շաբաթներ առաջ է թույլատրվել դեղորայք եւ անհրաժեշտ սնունդ հասցնել: Ադրբեջանի իշխանությունները պետք է անհապաղ դադարեցնեն Լաչինի միջանցքի արգելափակումը եւ ապահովեն մարդկանց եւ ապրանքների ազատ տեղաշարժը Լաչինի միջանցքով, ինչպես նաեւ երաշխավորեն հումանիտար հասանելիությունը՝ միջազգային իրավունքի եւ Արդարադատության միջազգային դատարանի որոշմանը համապատասխան: Պետությունները պետք է երկխոսություն վարեն բոլոր կողմերի հետ, ինչպես նաեւ աջակցեն տեղում հումանիտար իրավիճակը գնահատելու համար անկախ փաստահավաք առաքելություն ուղարկելու վերաբերյալ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի կոչին»,- ասված է հաղորդագրության մեջ: Պաշտպանության պատասխանատվության համաշխարհային կենտրոնի հաղորդագրությանը «Թվիթեր»-ում կատարած գրառմամբ արձագանքել է նաեւ Հայաստանի արտաքին գործերի նախարարության մամուլի խոսնակ Անի Բադալյանը:

«Պաշտպանության պատասխանատվության համաշխարհային կենտրոնն արձանագրել է, որ Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի արգելափակումը հազարավոր մարդկանց է ռիսկի տակ դնում Լեռնային Ղարաբաղում»,- գրել է Բադալյանը:

ՄԻԵԴ ԴԱՏԱՎՈՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Եվրադատարանում Հայաստանի ներկայացուցիչ դատավոր Արմեն Հարությունյանի ժամկետի ավարտին քիչ է մնացել, եւ քաղաքական իշխանության ներսում կռիվ կինո է հասունանում: Բանն այն է, որ Եվրադատարանում Հայաստանի ներկայացուցիչ դատավոր դառնալու համար իշխանության ներսում 3 թեկնածուի անուն է պտտվում: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ դատավոր դառնալու համար պայքարում են ՍԴ անդամ Վահե Գրիգորյանը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ Եղիշե Կիրակոսյանը եւ ԲԴԽ նախագահ Կարեն Անդրեասյանը, իսկ թե ի վերջո որ թեկնածուին հավանություն կտա քաղաքական իշխանությունը, դժվար է ասել, սակայն փաստ է մեկ բան՝ դատական համակարգում երեք անուն է շրջանառվում: Հիշեցնենք, որ 2015 թվականի հունիսի 23-ին Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի դատավոր է ընտրվել Արմեն Հարությունյանը: Վերջինս ընտրվել է 9 տարով:

ՄՈՒՏՔԸ ԲԱՑԵՑԻՆ

Արցախցի երիտասարդները երեկ՝ վաղ առավոտից, փակել էին Կարմիր խաչի մուտքը եւ չէին թողնում աշխատակիցներին մտնել ներս: Նրանց միացավ նաեւ օրեր առաջ առեւանգված Վագիֆ Խաչատրյանի դուստրը, որը պահանջում էր որեւէ տեղեկություն տալ իր հոր մասին: Ոստիկանները փորձում էին բանակցությունների միջոցով երիտասարդներին համոզել բացել մուտքը: Արցախցի երիտասարդները ոստիկանության հետ բանակցություններից հետո թույլ տվեցին Կարմիր խաչի աշխատակիցներին մտնել շենք:

Համաձայնության եկան աշխատակիցների հետ. ներս մտնելու դեպքում պետք է ընդունեն Վագիֆ Խաչատրյանի դստերը՝ Վերային: Վերջինիս հրավիրեցին՝ խոսելու Կարմիր խաչի աշխատակիցների հետ:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնեցին, որ որեւէ նոր բան չեն ասել Վերային, նրան հուսադրել են, որ աշխատանքներ կտարվեն նրա հայրիկի հետ կապ հաստատելու ուղղությամբ:

Հիշեցնենք, որ օրեր առաջ Հակարի կամրջի մոտ գտնվող անցակետից ադրբեջանցիների կողմից առեւանգվել էր Վագիֆ Խաչատրյանը: Նրա դուստրը՝ Վերան, արդեն մի քանի օր շարունակ միջազգային կազմակերպություններին է դիմում իր հոր մասին տեղեկություններ ստանալու համար, սակայն որեւէ արձագանք չկա:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԼԻՆԵԼԸ՝ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈ՞Ւ Ն

ԿԸՀ նախագահ Վահագն Հովակիմյանը համոզված է, որ լինելով ՔՊ հիմնադիր անդամ՝ կկարողանա ապահովել Երեւանի ավագանու ազատ, արդար ու թափանցիկ ընտրություններ:

«Այո, կարող եմ, որովհետեւ մինչեւ ՔՊ անդամ լինելը ես եղել եմ լրագրող, եւ երկար տարիներ իմ գործունեությունը նվիրված է եղել ազատ, թափանցիկ, մրցակցային ու արդար ընտրություններ ունենալուն: Կուսակցական լինելը չի ենթադրում լինել հանցագործ, որովհետեւ ԿԸՀ նախագահի կողմից արդար, ազատ ու թափանցիկ ընտրությունների ապահովման համար իր պարտավորությունների չկատարումը կլինի հանցագործություն: Ես կարող եմ եւ ապահովելու եմ, որ Հայաստանում, քանի դեռ ես ԿԸՀ նախագահն եմ, ընտրությունները լինեն ազատ, արդար, թափանցիկ»,-ասաց նա:

Անդրադառնալով քարոզչությանը՝Հովակիմյանն ասաց. «Ամենամեծ մոլորությունը մեր հասարակական հարաբերություններում այն է, որ մրցակցությունն սկսվում է այն պահին, երբ նշանակվում են ընտրություններ: Մրցակցությունը քաղաքական ուժերի միջեւ առկա է միշտ: Այն ուղղակի քարոզչության տեսքով իրավունք չունեն արտահայտել քվեարկության օրը եւ դրա նախորդ օրը: Մեր քաղաքական դաշտին շատ կնպաստի, եթե մեր քաղաքական ուժերը ընտրությունների միջեւ ընկած 5 տարիները օգտագործեն իրենց գաղափարները, հայացքները տարածելու, համախոհներ ներգրավելու ուղղությամբ:

Եթե օրենսդրությունն ուսումնասիրեք, կտեսնեք, որ քարոզարշավի փուլը ոչ թե հնարավորությունների եւ իրավունքների, այլ սահմանափակումների փուլ է: Այդ փուլում ընտրական օրենսգիրքը հստակ ամրագրում է, թե քաղաքական ուժերն ինչպես կարող են քարոզչություն իրականացնել, մինչդեռ դրան նախորդող 5 տարիներին քարոզչություն իրականացնելիս ավելի ազատ են»:

Անդրադառնալով ընտրական բուն գործընթացին՝ Հովակիմյանը նշեց, որ օգոստոսի 3-ից քաղաքական ուժերը կարող են իրենց առաջադրման փաստաթղթերը ներկայացնել ԿԸՀ: «Տեղեկացնեմ, որ գոնե այս պահի դրությամբ դեռեւս ոչ մի քաղաքական ուժ չի առաջադրվել: Ովքեր ընտրությունները պարբերաբար լուսաբանում են, գիտեն, որ քաղաքական ուժերը միշտ էլ չեն շտապում ու առաջադրումները գրանցում են նույնիսկ ժամկետի ավարտին մոտ»:

Նշենք, որ Երեւանի ավագանու ընտրությունները նշանակված են սեպտեմբերի 17-ին: Երեկվանից սկսվել է կուսակցությունների առաջադրումը:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ՝ ԱՐՑԱԽԻ ՄԱՍԻՆ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ՝ տեղի է ունեցել Կառավարության հերթական նիստը: Նիստի սկզբում վարչապետն անդրադարձել է Ադրբեջանի կողմից ադօրինի կերպով Լաչինի միջանցքի արգելափակման հետեւանքով Լեռնային Ղարաբաղում ստեղծված հումանիտար ճգնաժամին, Կոռնիձորում գտնվող հումանիտար օգնության՝ ԼՂ տեղափոխելու արգելափակմանը, ինչպես նաեւ խաղաղ գործընթացը վիժեցնելու Ադրբեջանի գործողություններին:

Մասնավորապես, վարչապետը նշել է, որ Լեռնային Ղարաբաղում հումանիտար ճգնաժամի պայմաններում Լեռնային Ղարաբաղի ժողովրդին աջակցության համար Հայաստանի Հանրապետության կառավարական աշխատանքային խմբի որոշմամբ նախորդ շաբաթ Լեռնային Ղարաբաղ ուղարկված 361 տոննա հումանիտար օգնությունը շարունակում է գտնվել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կոռնիձոր բնակավայրի հատվածում՝ Լաչինի միջանցքի մուտքի մոտ, որովհետեւ Ադրբեջանը, կոպտորեն խախտելով 2020թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության 6-րդ կետը, ապօրինաբար արգելափակում է այդ հումանիտար բեռների մուտքը Լեռնային Ղարաբաղ: Փաշինյանը հիշեցրեց, որ Հայաստանի կառավարությունը Լեռնային Ղարաբաղ մարդասիրական բեռներ ուղարկելու որոշում կայացրեց այն բանից հետո, երբ Կարմիր խաչի միջազգային կոմիտեն հայտարարեց իր կողմից Լեռնային Ղարաբաղ հումանիտար բեռներ տեղափոխելու անհնարինության մասին, քանի որ Ադրբեջանն ապօրինաբար խոչընդոտում է նաեւ այդ ջանքերին:

Փաշինյանի խոսքով՝ Ադրբեջանը համառորեն շարունակում է պնդել, թե Լաչինի միջանցքի փակման պատճառներից մեկը սույն թվականի հունիսի 15-ին, ինչպես ինքն է ձեւակերպում, հայկական կողմի ռազմական սադրանքն է: Այդ օրն Ադրբեջանը փորձել էր դրոշ տեղադրել հակարի կամրջի եզրին՝ Հայաստանի տարածքում՝ արժանանալով Հայաստանի սահմանապահ զորքերի օրինական հակազդեցությանը: Հենց Ադրբեջանի վերը նշված գործողությունն է սադրանքը, առավել եւս՝ այն պայմաններում, երբ երկու երկրների միջեւ սահմանազատման եւ սահմանագծման աշխատանքները դեռ մեկնարկի փուլում են: Տարբեր տեղերում ինքնակամ եւ հաճախ ուժի գործադրմամբ դրոշներ դնելու Ադրբեջանի գործելակերպը սահմանազատման եւ, ընդհանրապես, խաղաղ գործընթացը վիժեցնելու գործողության է նման:

«Նախորդ օրը սա երեւաց նաեւ Ադրբեջանի նախագահի՝ «Եվրոնյուզ»-ին տված հարցազրույցում: Հայտարարելով, թե, իբր, Ադրբեջանը Հայաստանից տարածքային պահանջներ չունի՝Ադրբեջանի նախագահն ասում է, թե Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ սահմանները որոշված չեն: Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ սահմանները որոշվել են 1991թ. Ալմաթիի հռչակագրով, եւ դա վերահաստատվել է 2022թ. հոկտեմբերի 6-ի Պրահայի քառակողմ հանդիպման արդյունքներով, որտեղ Ալմաթիի հռչակագիրն ընդունվել է որպես երկու երկրների միջեւ սահմանների սահմանազատման եւ սահմանագծման հիմք: Տպավորություն է ստեղծվում, թե Ադրբեջանի պլանը հետեւյալն է՝Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ Ալմաթիի հռչակագրով ֆիքսված սահմանը վիճարկելու տեղ թողնող դրույթներով խաղաղության պայմանագիր ստորագրել եւ հետագայում արդեն սահմանազատման եւ սահմանագծման գործընթացում տարածքային պահանջներ առաջադրել Հայաստանի Հանրապետությանը: Եթե Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ սահմանները որոշված չեն, ի՞նչ տարածքների հարց է բարձրացնում Ադրբեջանը սահմանի տարբեր հատվածներում: Եթե նման հարց բարձրացվում է, ուրեմն սահմանները որոշված են, իսկ այդ սահմանի գծից զորքերի հայելային հետքաշման Հայաստանի առաջարկը շարունակում է մնալ ուժի մեջ: Իսկ սահմանների սահմանազատումը եւ սահմանագծումը ոչ թե սահմանի բացակայության մասին է վկայում, այլ հակառակը՝ որոշված, այսինքն՝ Խորհրդային Հայաստանի եւ Խորհրդային Ադրբեջանի միջեւ Խորհրդային Միության փլուզման պահին գոյություն ունեցած վարչական սահմանագծերի վերահաստատման եւ հողի վրա դրանց արտացոլման գործընթացն է՝ որպես պետական սահման:

Այդ առումով ուզում եմ ընդգծել Հայաստանի հավատարմությունը միմյանց՝ 86,600 եւ 29,800 քառակուսի կիլոմետր տարածքային ամբողջականության ճանաչման հիման վրա Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ խաղաղություն հաստատելու պայմանավորվածությանը: Սպասում ենք Ադրբեջանի կողմից այդ պայմանավորվածության հրապարակային վերահաստատմանը»:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳՎԵՑ

Կառավարությունն օգոստոսի 3-ի նիստում գնման պայմանագրում փոփոխություն կատարելու թույլտվություն տալու մասին որոշում կայացրեց, որով նախատեսվում է, «Ճանապարհ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ 2022 թվականի օգոստոսի 24-ին կնքված պայմանագրով, /Մ-12/-Կոռնիձոր-ՀՀ սահման ավտոճանապարհի կմ 9+000-կմ11+779.75 հատվածի վերակառուցման համար սահմանված ընդհանուր աշխատանքների ժամկետը երկարաձգել մինչեւ 2023 թվականի օգոստոսի 30-ը:

Որոշման հիմնավորման մեջ նշվում է, որ ՏԿԵ նախարարություն է դիմել /Մ-12/-Կոռնիձոր-ՀՀ սահման ավտոճանապարհի կմ 9+000- կմ11+779.75 հատվածի վերակառուցման աշխատանքներ իրականացնող «Ճանապարհ» ՍՊ ընկերությունը, տվյալ հատվածում իր կամքից անկախ պատճառների հետեւանքով հնարավորություն չի ունեցել աշխատանքներն ավարտին հասցնել պայմանագրով սահմանված ժամկետներում եւ խնդրել է երկարաձգել Կապալի պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժամկետը, ինչպես նաեւ ապահովել աշխատանքների ավարտման համար (ծածկի վերին շերտի տեղադրման եւ կահավորման աշխատանքներ) անհրաժեշտ պայմաններ:

ՊՆ ՆՈՐ ՓՈԽՆԱԽԱՐԱՐ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ՝ Հրաչյա Սարգսյանն ազատվել է վարչապետի խորհրդականի պաշտոնից:

Վարչապետի մեկ այլ որոշմամբ՝Հրաչյա Սարգսյանը նշանակվել է պաշտպանության նախարարի տեղակալ:

Հիշեցնենք, որ Հրաչյա Սարգսյանը նախկինում զբաղեցնում էր Երեւանի քաղաքապետի պաշտոնը, սակայն հրաժարական տվեց այս տարվա մարտի 17-ին, իսկ ապրիլի 4-ին նշանակվեց վարչապետի խորհրդական:

ԴՐԱՄԱՀԱՎԱՔ-ԵՐԵԿՈՅԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ, Երեւանի ավագանու ընտրություններին ընդառաջ, տեղի է ունեցել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության դրամահավաք-երեկոն: Մեզ հայտնի դարձավ, որ թվով 987 նվիրատուների հանգանակությունների արդյունքում հավաքվել է 506 532 950 ՀՀ դրամ: Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Նիկոլ Փաշինյանը ներքին կարգով պատգամավորներին հրահանգել էր՝ ամեն մեկն իր կողմից առնվազն 5 հյուր բերեր, որպեսզի հավաքույթը մարդաշատ անցներ. բացի սա, պատգամավորներին ասվել էր, որ իրենց բերած հյուրերից յուրաքանչյուրը 20.000-ական դրամ պիտի նվեր տար իշխող կուսակցությանը դրամահավաքի անվան տակ:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ՈՒՇԱԳՐԱՎ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ՝ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ

«Ժողովուրդ» օրաթերթին ուշագրավ մանրամասներ են հայտնի դարձել «Նեռոտուն» մարզահամալիրի մոտ 18-ամյա երիտասարդի սպանության դեպքից: Ինչպես հայտնի է, 18-ամյա Դ. Թամարյանի սպանության համար մեղադրվում է 26-ամյա Հայկ Մելտոնյանը, որն արդեն 2 ամիս է՝ կալանքի տակ է:

Բանն այն է, որ դեռեւս 2016թ. Թամարյանի հայրը չնչին կենցաղային հարցով վիճաբանել է Մելտոնյանների հետ, որից հետո բարեկամների հետ հարձակվել եւ սպանել են Հայկ Մելտոնյանի 25-ամյա եղբորը՝Անդրանիկ Մելտոնյանին: Այս քրեական գործը Վրաստանի իրավապահների կողմից կոծկվել է, սպանության հատկանիշներից հանել են խմբի մասը, սպանության մեջ մեղադրվող Դավիթ Թամարյանի հորը՝ Անդրանիկ Թամարյանին էլ ընդամենը 7 տարվա ազատազրկման են դատապարտել:

Ուշագրավ է, որ 7 տարվա ազատազրկման են դատապարտել նաեւ պաշտպանվողին, որը սպանության փորձի համար է մեղադրվում, այսինքն՝ նրա կրակոցից ոչ մեկ չի մահացել, վիրավորվել է:

Այս դեպքից հետո երկու ընտանիքների միջեւ կոնֆլիկտը ավելի է սրվել: Իրավապահ համակարգի մեր աղբյուրը պատմեց քրեական գործով ի հայտ եկած ուշագրավ հանգամանքներ: Մասնավորապես, կրտսեր Մելտոնյանի սպանությունից հետո Թամարյանները սկսում են իրենց վատ պահել, գալիս են զոհվածի գերեզմանի մոտ, տեսնելով ողբացող ընտանիքի մորը՝ դիտմամբ բարձր երաժշտություն են միացնում, ծիծաղում, սելֆիներ անում գերեզմանի ֆոնին եւ տարածում սոցիալական ցանցում, հայտարարում, թե «էլի ենք սպանելու, մի՛ բողոքեք, թե չէ էլի ենք խփելու, մենք հզոր ենք, нас не победить, հայրս շուտով դուրս է գալու...»: Վրաստանում Մելտոնյանները պայքար են սկսում արդարության հասնելու համար, հորեղբայրը հացադուլ է հայտարարում, հանդիպում դատախազի հետ, արդյունքում գործը վերաբացվում է, եւ իրավապահ համակարգի աշխատակիցներ են կալանավորվում կոռուպցիայի համար:

Այժմ էլ այդ գործի շրջանակներում կալանավորված է Դավիթ Թամարյանի հայրը՝Անդրանիկ Թամարյանը, վարորդը, իսկ պապը հետախուզման մեջ է: Եղբոր մահվանից հետո Հայկը հոգեբանական ծանր, սթրեսային վիճակում է հայտնվում, ինքնամեկուսանում, հանգստացնող դեղորայք օգտագործում, հոգեբանի այցելում: Մորից իմանալով Դավիթ Թամարյանի այս արարքների մասին՝ որոշում է նրան հանդիպել, պաշտպանության նպատակով հետը նաեւ իր զենքն է վերցնում: Հասնելով Թամարյանի բնակության վայր՝ Հայկի վիճակը վատանում է, սկսում է դողալ, սիրտը սկսում է արագ աշխատել, որոշում է վերադառնալ, երբ հանկարծ նկատում է Դավիթին, աչքերի առաջ հայտնվում է եղբայրը, որը մահացել է հենց իր ձեռքերի մեջ՝չկարողանալով արտաբերել անգամ վերջին խոսքերը: Իր ցուցմունքներում Հայկը պատմել է, որ չի գիտակցել՝ ինչ է արել, գիտակցությունը մթագնել է, եւ սթափվել է՝ տեսնելով արյուն, Դավիթին՝գետնին ընկած, ու սկսել է վազել՝նստելով պատահական մի տաքսի եւ ուղիղ գնալով ոստիկանություն՝հանձնվելու:

Հիշեցնենք, որ մայիսի 29-ին՝ ժամը 23:30-ին, ՀՀ ՆԳՆ ոստիկանության Երեւան քաղաքի վարչության Մալաթիայի բաժին է ներկայացել Հ.Մ.-ն եւ հայտնել, որ 23:20-ի սահմաններում Երեւան քաղաքի Ծովակալ Իսակովի պողոտայի 40 հասցեի մոտ իր մոտ եղած «Մակարով» տեսակի ատրճանակից 7 անգամ կրակել եւ սպանել է Դ. Թամարյանին:

ՀՀ քննչական կոմիտեի ԵՔՔՎ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնում, ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասով եւ 335-րդ հոդվածի 1-ին մասով, նախաձեռնվել է քրեական վարույթ, ստեղծվել է քննչական խումբ:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՈՒՇԱԳՐԱՎ

ՄԵՂԱԴՐԱՆՔ Է ԱՌԱՋԱԴՐՎԵԼ

Ադրբեջանի կողմից առեւանգված Արցախի բնակիչ Վագիֆ Խաչատրյանն Ադրբեջանում հարցաքննվել է նրա նկատմամբ հարուցված շինծու քրեական գործով:

Ադրբեջանական APA գործակալությանը տված հարցազրույցում Ադրբեջանի գլխավոր դատախազի հատուկ հանձնարարություններով օգնական Իլգար Սաֆարովը հայտնել է, որ Վագիֆ Խաչատրյանին ձերբակալելուց հետո հետազոտել եւ առաջին հերթին տեղափոխել են բուժհաստատություն:

Բուժօգնությունից հետո նրան տրամադրել են փաստաբան եւ թարգմանիչ:

Սաֆարովը նշել է, որ Վագիֆ Խաչատրյանին մեղադրանք է առաջադրվել, ինչից հետո նա հարցաքննվել է:

Իլգար Սաֆարովը նաեւ հայտնել է, որ այս պահին Վագիֆ Խաչատրյանի նկատմամբ իրականացվում են քննչական այլ գործողություններ:

Ադրբեջանը հուլիսի 29-ին առեւանգել է ԿԽՄԿ-ի ուղեկցությամբ բուժման նպատակով Արցախից Հայաստան տեղափոխվող քաղաքացիներից մեկին՝ վաթսունութամյա Վագիֆ Խաչատրյանին: Լաչինի միջանցքում տեղակայված ապօրինի անցակետում ադրբեջանցի սահմանապահները ստուգել են Արցախից Հայաստան տեղափոխվող քաղաքացիների անձնագրերը, հետո վերադարձրել են անձնագրերը, սակայն Վագիֆ Խաչատրյանի անձնագիրը չեն վերադարձրել: Նրան ԿԽՄԿ-ի ներկայացուցչի ուղեկցությամբ տարել են հարցաքննելու, իսկ որոշ ժամանակ անց ԿԽՄԿ-ի ներկայացուցչին վերադարձրել են, իսկ Վագիֆ Խաչատրյանին՝ տեղափոխել Բաքու: Բաքվում նրան շինծու մեղադրանքներ են առաջադրել՝ իբր Արցախյան առաջին պատերազմի ժամանակ «ադրբեջանցիների նկատմամբ ցեղասպանական գործողությունների մասնակցելու համար»:

ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱՍԵՑՎԵՑ

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ այս պահին Արմավիրի բանտում ուշագրավ իրավիճակ է: Մեզ ահազանգած կալանավորները հայտնեցին, որ ժամը 12:00-ին պետք է հաց տային կալանավորներին, սակայն գործընթացը կանգնեցրել են: Ավելին՝ կալանավորների հարազատները հանձնունքներ են բերել, որ փոխանցեն իրենց մտերիմներն. այդ գործընթացը եւս կասեցված է:

«Ժողովուրդ» օրաթերթին կալանավորները հայտնեցին, որ հատուկ նշանակության զորքերը՝ բոլորին հայտնի «Սպեցնազը», այս պահին Արմավիրի բանտի մոտ է, ու կալանավորները տեղյակ չեն, թե ինչու են նրանք եկել քրեակատարողական հիմնարկ:

ԿԱԼԱՆՔ

ԽՈՇՈՐ ՉԱՓԻ ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչությունում ավարտվել է Կարճաղբյուր բնակավայրի միջնակարգ դպրոցի տնօրենի եւ հաշվապահի կողմից կատարված չարաշահումների դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթից անջատված մասով նախաքննությունը:

ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով եւ 315-րդ հոդվածի 1-ին մասով հարուցված եւ մեկ վարույթում միացված քրեական գործերի նախաքննության ընթացքում կատարված մեծածավալ ապացուցողական եւ վարութային գործողությունների արդյունքում ձեռք բերված փաստերով հիմնավորվել է, որ Գեղարքունիքի մարզի Վարդենիս խոշորացված համայնքի Կարճաղբյուր բնակավայրի «Ա.Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱ կազմակերպության տնօրենը, 2016-2019 թվականների ընթացքում պարտավոր լինելով ստուգել հաշվապահի կողմից աշխատավարձերի բաշխման վերաբերյալ կազմված փաստաթղթերի իսկությունը եւ համապատասխանելիությունը, դիտավորությամբ, անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով, չի կատարել իր ծառայողական պարտականությունները:

Մասնավորապես, տնօրենը, ունենալով կազմված աշխատավարձերի բաշխման վերաբերյալ փաստաթղթերի իսկությունը ստուգելու եւ դրանից հետո միայն հաստատելու, հսկելու պարտականություն, առանց օրենսդրական հիմքերի, աշխատավարձերի վճարման գանձապետական համակարգից օգտվելու կանոնները չիմանալու պատճառաբանությամբ իր փոխարեն նշված գործողությունների կատարումը վստահել է դպրոցի հաշվապահին՝ վերջինիս տրամադրելով իր նույնականացման քարտը, աշխատավարձերի վճարման գանձապետական համակարգ մուտք գործելու համար նախատեսված իր մուտքանուն-գաղտնաբառը:

Արդյունքում հաշվապահն աշխատավարձերի բաշխման վերաբերյալ փաստաթղթերում ներառել է դպրոցի աշխատակից չհանդիսացող, Երեւան քաղաքի բնակիչ 2 անձանց տվյալները, նրանց անվամբ ելքագրել 28.526.400 ՀՀ դրամ գումար ու հափշտակել՝ՊՈԱ կազմակերպությանը պատճառելով առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա՝դպրոցի տնօրենին մեղադրանք է ներկայացվել ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով: Որպես խափանման միջոց նրա նկատմամբ կիրառվել է բացակայելու արգելքը: Վերջինիս մասով նախաքննությունն ավարտվել է, եւ քրեական վարույթի նյութերը՝մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են հսկող դատախազին:

Դպրոցին պատճառված վնասից 1մլն դրամը նախաքննության ընթացքում վերականգնվել է:

Դպրոցի հաշվապահի նկատմամբ քրեական հետապնդում է հարուցվել՝ՀՀ նախկին քրեական օրենսգրքիք 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով: Որպես խափանման միջոց նրա նկատմամբ կիրառվել է կալանավորումը, եւ հայտարարվել է հետախուզում: Այս մասով նախաքննությունը շարունակվում է: Ձեռնարկվում են միջոցառումներ՝ վերջինիս հայտնաբերելու եւ վարույթն իրականացնող մարմնին ներկայացնելու ուղղությամբ:

Պատճառված վնասի վերականգնման իրավական երաշխիքներ ապահովելու նպատակով վերջինիս գույքի նկատմամբ կիրառվել է կալանք:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝օգոստոսի 2-ից 3-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 78 դեպք, որոնցից 1-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԿԵՂԾ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՎ

2019թ. հունիսի 18-ին «Էքսպրես Կրեդիտ ՈՒՎԿ» ՓԲԸ-ից ՊԵԿ հետաքննության եւ օպերատիվ հետախուզության վարչություն հաղորդում է ստացվել «Ուլիխանյան եւ ընկերներ» ՍՊԸ-ի կանխամտածված սնանկության եւ փաստաթղթեր կեղծելու վերաբերյալ: Նույն օր քրեական գործ է հարուցվել: Նյութերի նախապատրաստության ընթացքում պարզվել է, որ «Ուիլխանյան եւ ընկերներ» ՍՊԸ-ի 100 տոկոս մասնակիցն ու տնօրենը 2021թ. նոյեմբերի 6-ից հանդիսանում է Անուշավան Ուլիխանյանը: Պարզվել է նաեւ, որ «Էքսպրես Կրեդիտ ՈՒՎԿ» ՓԲԸ-ի եւ «Ուլիխանյան եւ ընկերներ» ՍՊԸ-ի միջեւ 2013թ. հունվարի 31-ին կնքվել է վարկային պայմանագիր, որով վարկատուին տրամադրվել է 60 հազար ԱՄՆ դոլար՝ 120 ամիս մարման ժամկետով, 2013թ. մայիսի 31-ին վերոհիշյալ իրավաբանական անձանց միջեւ կնքվել է վարկային պայմանագիր, որով վերջինիս տրամադրվել է 15 հազար ԱՄՆ դոլար՝120 ամիս մարման ժամկետով, 2014թ. օգոստոսի 1-ի նույն իրավաբանական անձանց միջեւ կնքվել է վարկային պայմանագիր, որով տրամադրվել է 60 հազար ԱՄՆ դոլար՝144 ամիս մարման ժամկետով: Վերոհիշյալ 3 վարկային պայմանագրերին ի կատարումն դրանց կնքման ամսաթվերով համապատասխանաբար կնքվել են եռակողմ երաշխավորության պայմանագրեր «Էքսպրես Կրեդիտ ՈՒՎԿ» ՓԲԸ-ի, «Ուլիխանյան եւ ընկերներ» ՍՊԸ-ի եւ Անուշավան Ուլիխանյանի միջեւ, որոնցով վերջինս համապարտ պարտավորություն է ստանձնել «Ուլիխանյան եւ ընկերներ» ՍՊԸ-ի պարտավորությունների կատարման համար: Վարկային պայմանագրերի հետ միաժամանակ «Էքսպրես Կրեդիտ ՈՒՎԿ» ՓԲԸ-ի հետ կնքվել են կոշտ գրավի եւ երաշխավորության պայմանագրեր, որոնցով գրավադրվել են վարկառուին եւ երաշխավորներին պատկանող մի քանի անշարժ եւ շարժական գույք: Վերոհիշյալ վարկային պարտավորությունները «Ուլիխանյան եւ ընկերներ» ՍՊԸ-ի կողմից ժամանակին կատարել չկարողանալու պատճառով «Էքսպրես Կրեդիտ ՈՒՎԿ» ՓԲԸ-ն բռնագանձման պահանջներ է ներկայացրել դատարան, որոնք 2017թ. հուլիսի 14-ին կայացած վճիռներով բավարարվել են, սակայն բռնագանձման ենթակա գույքը բավարար չի եղել վարկային պարտավորությունները մարելու համար: 2018թ. մարտի 22-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանը որոշել է «Ուլիխանյան եւ ընկերներ» ՍՊԸ-ին ճանաչել սնանկ, դատարանի նույն օրվա մեկ այլ որոշմամբ սնանկ է ճանաչվել նաեւ Անուշավան Ուլիխանյանը: Արթուր Վիրաբյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ իրավունք վերապահող պաշտոնեական փաստաթղթեր կեղծելու վերաբերյալ նախնական համաձայնության գալով Դիլիջանի բնակիչներ Անուշավան Ուլիխանյանի եւ Անուշավան Խաչատրյանի հետ՝վերջինիս կողմից օգտագործելու նպատակով 2016թ. սեպտեմբերի 27-ից մինչեւ 2018-ի փետրվարի 28-ն ընկած ժամանակահատվածում՝ քննությամբ չպարզված օրը, մեկ միասնական դիտավորությամբ կեղծել է պաշտոնեական փաստաթղթեր՝ ստորագրելով 2015թ. հոկտեմբերի 17-ի թվագրմամբ իր եւ Անուշավան Խաչատրյանի միջեւ փոխառության պայմանագիր: Անուշավան Ուիխանյանին մեղադրանք է առաջադրվել Քրեական օրենսգրքի 325 հոդվածի 2-րդ մասով, Անուշավան Խաչատրյանին՝ 325 հոդվածի 2-ին մասով, Արթուր Վիրաբյանին՝ 325 հոդվածի 2-րդ մասով եւ 349 հոդվածի 1-ին մասով:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԾՐԱԳԻՐ

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

Հայաստանի վեց մարզերի եւ մայրաքաղաքի 16 ավագ դպրոցի բաղադիչ ունեցող ուսումնական հաստատություններում սեպտեմբերից կմեկնարկի «Արհեստական բանականության (ԱԲ) սերունդ» փորձարարական ծրագիրը: ՀՀ կրթության, գիտության, մշակույթի ու սպորտի նախարարությունը (ԿԳՄՍՆ) հավանության է արժանացրել բաց մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված դպրոցների ցանկը:



Նախատեսված 10-ի փոխարեն՝ կրթությունը կիրականացվի 16 դպրոցներում:

Ծրագիրը մշակվել է Հայաստանի գիտության ու տեխնոլոգիաների հիմնադրամի (FAST-ի) կողմից եւ իրականացվում է ԿԳՄՍՆ-ի աջակցությամբ եւ ոլորտի կառույցների ու մասնավոր հատվածի հետ լայնամասշտաբ համագործակցությամբ:

Այս ուսումնական տարվանից ծրագրին կմիանան Արմավիրի մարզի երկու, Գեղարքունիքի՝ մեկ, Լոռու՝ երեք, Կոտայքի՝չորս, Սյունիքի՝մեկ, Շիրակի՝երկու, եւ Երեւանի՝ երեք կրթական հաստատությունները՝ ԱԲ կրթությունը հասանելի դարձնելով շուրջ 200 աշակերտի: Այդ հաստատություններն են Արմավիրի մարզի Վաղարշապատի Մ? Գորկու անվան թիվ 5 ավագ դպրոցը, Էօրնեկեան հանրակրթական դպրոցը, Գեղարքունիքի մարզի Մարտունու Տ? Աբրահամյանի անվան ավագ դպրոցը, Լոռու մարզի ՀԱՊՀ հիմնադրամի Վանաձորի մասնաճյուղի ավագ դպրոցը, Վանաձորի Գրիբոյեդովի անվան թիվ 11 ավագ դպրոցը, Վանաձորի մաթեմատիկայի եւ բնագիտական առարկաների խորացված ուսուցմամբ հատուկ դպրոցը, Կոտայքի մարզի Չարենցավանի Մ. Մաշտոցի անվան ավագ դպրոցը, Հրազդանի Հ. Օրբելու անվան թիվ 13 ավագ դպրոցը, Եղվարդի թիվ 1 ավագ դպրոցը, Հրազդանի Խ? Աբովյանի անվան թիվ 1 ավագ դպրոցը, Սյունիքի մարզի Կապանի թիվ 2 ավագ դպրոցը, Շիրակի մարզի Գյումրու թիվ 1 ավագ դպրոցը, Գյումրու տնտեսագիտական վարժարանը, Երեւանի թիվ 198 ավագ դպրոցը, Երեւանի Գյուլբենկյանի անվան թիվ 190 ավագ դպրոցն ու «Եվրասիա» հենակետային վարժարանը:

«ԱԲ սերունդ»-ը նպատակ ունի ստեղծելու արհեստական բանականության ոլորտի գիտնականի ու նորարարի կրթական ուղին՝ սկսած դպրոցից: Աշակերտները կուսումնասիրեն խորացված մաթեմատիկա, ծրագրավորում՝ Python լեզվի հիման վրա, արհեստական բանականություն՝ ընդհանուր եւ խորացված ծրագրով, արդեն 12-րդ դասարանում կիրականացնեն պրակտիկ նախագծեր ԱԲ ոլորտում: Ծրագիրը միտված է ապահովելու մասնագիտական կողմնորոշում՝ արհեստական բանականության (ԱԲ) հետազոտողի մասնագիտության հանդեպ հետաքրքրության բարձրացման եւ այս ուղղությամբ հետագա կրթությունը շարունակելու համար: Նախատեսվում են նաեւ դասավանդող խմբի վերապատրաստումներ եւ մենթորական ծրագիր՝ գործընկեր կառույցների հետ համագործակցությամբ: Ծրագրի փորձարարական ժամկետ է սահմանվել 2023 թվականի սեպտեմբերի 1-ից մինչեւ 2026 թվականի օգոստոս ամիսը, որից հետո այն նախատեսվում է ընդլայնել ու հասանելի դարձնել մեծաթիվ աշակերտների:

ՀԵՏԱՔՐՔԻՐ

ՀԱՐԿԵՐԻ ԱՎԵԼԱՑՈՒՄ

Հայաստանի պետական եկամուտների կոմիտեի կողմից 2023 թվականի հունվար-հուլիս ամիսների ընթացքում ապահովվել է 1 տրլն 265 մլրդ դրամ հարկային եկամուտներ եւ պետական տուրքեր, ինչը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշից ավելի է 178.4 մլրդ դրամով կամ 16.4%-ով:

Պետական եկամուտների կոմիտեն հայտնում է, որ նախորդ տարվա համադրելի ժամանակաշրջանի ցուցանիշում պղնձի խտահանքի, մոլիբդենի խտահանքի եւ մոլիբդենի արտահանման համար վճարված պետական տուրքի գումարները չներառելու պարագայում 2023 թվականի հունվար-հուլիս ամիսների ընթացքում ապահովված հարկային եկամուտների եւ պետական տուրքերի աճը, նախորդ տարվա համեմատ, կկազմի 223.9 մլրդ դրամ կամ 21.5%:

2023 թվականի հունվար-հուլիս ամիսների ընթացքում հարկ վճարողներին եւ ֆիզիկական անձանց վերադարձվել է շուրջ 210.2 մլրդ դրամ, ինչը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշից ավելի է 81.2 մլրդ դրամով կամ 63%-ով:

ՀՐԴԵՀՆԵՐԻ ՎՏԱՆԳ

Փոքր կայծը շատ անգամ կարող է մեծ հրդեհի տեղիք տալ: Ու չնայած գլոբալ տաքացմանը, այդուհանդերձ, հիմնական պատճառը շարունակում է մնալ մարդը. զգուշացնում է ԱՀ ՆԳՆ արտակարգ իրավիճակների պետական ծառայությունը:

«Այդ իսկ պատճառով շատ կարեւոր է հատուկ ուշադրություն դարձնել հրդեհային պրոֆիլակտիկային, բնակչության շրջանում իրականացվող բացատրական աշխատանքներին:

Եթե հայտնաբերվել է հրդեհի փոքր օջախ, պետք է փորձել հանգցնել այն: Դրա համար անհրաժեշտ է օգտագործել սաղարթավոր ծառերի տեսակների կամ մատղաշ ծառերի ճյուղերի կապուկ, թաց հագուստ, ամուր կտոր:

Ճյուղերը, կտորը յուրաքանչյուր հարվածից հետո շրջել, որպեսզի դրանք այդ ձեւով սառչեն ու չայրվեն:

Ոչ մեծ կրակը կարելի է տրորել ոտքերով՝ չթողնելով որ այն տարածվի ծառերի բներն ու սաղարթները: Մարելով փոքր հրդեհը՝ կարելի է հեռանալ՝ միայն համոզվելով, որ կրակը նորից չի բռնկվի:

Ամեն տարի ամռանը՝ հատկապես երաշտի պայմաններում, տարերային գործոնների եւ բնակչության անզգուշության հետեւանքով այգիներում, անտառներում, խոտածածկ տարածքներում եւ հնձած ցորենի դաշտերում բռնկվում են հրդեհներ, որոնք լուրջ վտանգ են ներկայացնում տնտեսությանը, մարդկանց կյանքին ու անվտանգությանը:

ՆԳՆ ԱԻ պետական ծառայությունը հորդորում է խստագույնս պահպանել հրդեհային անվտանգության կանոնները:

Անհրաժեշտ է բարձրացնել մարդկանց կարգապահությունը հրդեհային անվտանգության հարցերում, յուրաքանչյուրի գիտակցությանը հասցնել այն պարզ ճշմարտությունը, որ հրդեհների դեմ պայքարը սոսկ հրշեջների գործը չէ:

Միայն այդ դեպքում հնարավոր կլինի նվազեցնել հրդեհների առաջացման հնարավորությունը եւ խուսափել անցանկալի, իսկ երբեմն էլ՝ ծանր հետեւանքներից»,- նշվում է հայտարարությունում:

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 25 ՃՏՊ. 3 մարդ զոհվել է, 32-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

«ԱԿԲԱ» ԲԱՆԿ

ՀՈՒՇԱԳԻՐ ԵՆ ՍՏՈՐԱԳՐԵԼ

«Ակբա» բանկը եւ Հայաստանի ներդրումային խորհուրդն «Ակբա բիզնես» ակումբի շրջանակում ստորագրել են փոխըմբռնման հուշագիր, որով «Ակբա» բանկը եւ Հայաստանի ներդրումային խորհուրդը կհամագործակցեն Հայաստանում ներդրումային միջավայրի բարելավման, ինչպես նաեւ փոքր եւ միջին ձեռնարկությունների գործունեությունը կարգավորող օրենսդրության բարելավման եւ զարգացման շուրջ:

Հուշագրի շրջանակում «Ակբա բիզնես» ակումբի անդամների հետ կկազմակերպվեն Հայաստանի տնտեսության համար առաջնային նշանակություն ունեցող օրենսդրական հարցերի վերաբերյալ քննարկումներ, որի արդյունքում ակումբի անդամների՝ «ուղիղ բիզնեսից» ստացվող խնդիրները կքարտեզագրվեն հնարավոր լուծումներ գտնելու նպատակով: Քննարկումներում կներգրավվեն նաեւ Հայաստանի ներդրումային խորհրդի շահառուներ եւ փորձագետներ:

«Ակբա» բանկը եւ Հայաստանի ներդրումային խորհուրդն «Ակբա բիզնես» ակումբի շրջանակում ակումբի անդամների համար կկազմակերպեն նաեւ համատեղ սեմինարներ, գիտաժողովներ, աշխատանքային հանդիպումներ, ինչպես նաեւ գործնական վերապատրաստման աշխատաժողովներ:

«Ակբա բիզնես փարթնր» ենթաբրենդի ներքո ՓՄՁ ղեկավարներին հնարավորություն է տրվում ձեռք բերել նոր գիտելիքներ եւ կառավարման համար անհրաժեշտ գործիքներ, հաստատել նոր գործարար կապեր, ինչպես նաեւ դառնալ բիզնես համայնքի անդամ: «Ակբա բիզնես փարթնր» ենթաբրենդի շրջանակում ՓՄՁ ղեկավարները կարող են՝

- մասնակցել անվճար բիզնես դասընթացների,
- դառնալ «Ակբա բիզնես» ակումբի անդամ,
- օգտվել sme.acba.am օնլայն բիզնես հարթակի հնարավորություններից,
- առավել ճանաչելի դարձնել սեփական արտադրանքը՝ մասնակցելով «Արտադրված է մեր գործընկերների կողմից» նախագծին:

«Ակբա բիզնես» ակումբը հարթակ է, որը հնարավորություն է ընձեռում ՓՄՁ ղեկավարներին հաստատել նոր գործարար կապեր, մասնակցել թեմատիկ միջոցառումների, լինել բիզնես իրադարձությունների կիզակետում, ինչպես նաեւ օգտվել գործընկեր կազմակերպությունների կողմից տրամադրվող հատուկ առաջարկներից:

«Ակբա բիզնես» ակումբը նոր հեռանկարների եւ հնարավորությունների սկիզբ է բիզնեսների համար:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Իրաքի Հանրապետության քաղաքացի Հուսսեյն Ալի Աթթիյա Աթթիյան կորցրել է իր անձնագիրը: 29.07.2021թ. դրությամբ անձնագիրը չի գտնվել: Գտնելու դեպքում զանգահարել 033484938 հեռախոսահամարով:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ (1)

«Բիէսթի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը.

- Արարատի մարզ, համայնք Մասիս, գյուղ Այնթապ, 1-ին շարք, 109 հասցեում գտնվող 101,5 ք.մ. բնակելի տուն, 13,34 ք.մ. թոնրատուն, 8,12 ք.մ. թռչնանոց, 5,13 ք.մ. կաթսայատուն, 9,36 ք.մ. խոհանոց, 6,48 ք.մ. լողարան եւ 0,05 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 28070000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Քանաքեռ-Զեյթուն, Ռուբինյանց փողոց, 4ա շենք, 39 հասցեում գտնվող 50,4 ք.մ. բնակարան եւ 1,8 ք.մ. ինքնակամ շինություն: Լոտի մեկնարկային գինը՝ 24060000 ՀՀ դրամ :
- ք. Երեւան, Կենտրոն, Զորափի փողոց, 5 հասցեում գտնվող 428,1 ք.մ. բնակելի տուն, 33,4 ք.մ. օժանդակ շինություն, 5,9 ք.մ. օժանդակ շինություն եւ 0,0762 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 304900000 ՀՀ դրամ:

Լոտերի նկատմամբ սահմանափակումները՝ գույքերը գրավադրված են:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 21.08.2023թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 21.09.2023թ.-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքերը:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ (2)

«Բիէսթի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ -ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) սեփականության իրավունքով պատկանող հետեւյալ լոտը՝

ք. Երեւան, Շենգավիթ, Մ. Ֆրունզեի փողոց, 8/6 հասցեում գտնվող 590,5 ք.մ. խանութ: Լոտի մեկնարկային գինը՝ 120000000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ հոլանդական եղանակով, ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում 21.08.2023թ.-ին, ժ. 12:00-ին, այնուհետեւ հոլանդական եղանակով կայացվող աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրը, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 29.12.2023թ: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ-ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին, լոտերի ամբողջական ցանկին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին եւ Բորսային՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքեր:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԱՄՓՈՓՈՒՄ

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

Երեւանում շարունակում է ընթանալ ՀՀ սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի կողմից անցկացվող Ազգային երիտասարդական համաժողովը, որին մասնակցում են 600-ից ավելի երիտասարդներ 50-ից ավելի երկրներից:

Համաժողովի երկրորդ օրվա ընթացքում ողջույնի խոսքով հանդես է եկել Շվեդիայի խորհրդարանի հայազգի պատգամավոր Արին Կարապետը:

Որպես օրվա գլխավոր բանախոս՝ «Ստեղծի՛ր իրականությունը. Հայաստանը՝ որպես նորարարության հանգույց» թեմայով հանդես է եկել Picsart-ի ուսուցման եւ զարգացման բաժնի ղեկավար Մադլեն Մինասյանը:

«Անկեղծ խոսակցություն. սահմանելով Հայաստան-սփյուռք հարաբերությունների առաջնահերթությունները եւ երիտասարդության դերը կապերի ամրապնդման գործում» խորագրով պանելային քննարկանը մասնակցել են ՀՀ սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատար Զարեհ Սինանյանը, Միչիգանի համալսարանի Դիրբորն հայկական հետազոտական կենտրոնի գիտաշխատող Վահե Սահակյանը, Բրյուսելի Բաց համալսարանի գիտաշխատող Նիքոլաս Թավիթյանը, Շիլլերի միջազգային համալսարանի պրոֆեսոր եւ վերլուծաբան Տիգրան Եկաւեանը, ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի Սփյուռքի հետազոտությունների բաժին ավագ գիտաշխատող Սյուզաննա Բարսեղյանը: Նիստը վարել է Նիդերլանդների Consultancy HK ընկերության ղեկավար Հայկ Խանամիրյանը:

Ազգային անվտանգությանը վերաբերող նիստում հարցուպատասխանի ձեւաչափով մասնակցել է ՀՀ Անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը: Քննարկումը ղեկավարել է «Հայաստանի խաղաղության նախաձեռնության» տնօրեն, ֆրանսահայ Թալին Փափազյանը:

Օրվա երկրորդ կեսին համաժողովի մասնակիցները շարունակել են աշխատանքները աշխատաժողովների, քննարկումների եւ լուծումների սենյակի ձեւաչափով, որոնք վերաբերել են արդյունավետ երիտասարդական կազմակերպության ստեղծմանը եւ զարգացմանը, սփյուռքի կազմակերպությունների միջեւ գործակցության սերտացմանը եւ դաշնակից երկրների սփյուռքների հետ համագործակցության խթանմանը, հանրային կապերին, մեդիային եւ հայկական բրենդի առաջխաղացմանը: Ձեւաչափերը վարել են Միչիգան նահանգի Ներկայացուցիչների պալատի նախկին անդամ Մարի Մանուկյանը, «Miaseen Inc.» հարթակի հիմնադիր Անթոնի Տիքրան Ապաջին, Չիտայի «Մաշտոց» կրթամշակութային կենտրոնի ղեկավար Հարություն Աթոյանը, ինչպես նաեւ ԱՄՆ-ից, Ռուսաստանից, Շվեդիայից, Բելառուսից, Արգենտինայից, Ֆրանսիայից հրավիրված այլ փորձագետներ:

«Բացահայտելով հայրենիքի հնարավորությունները՝ կամավորություն, աշխատանք եւ բիզնես» պանելային քննարկմանը որպես բանախոսներ մասնակցել են Հայաստանի ներդրումային խորհրդի ղեկավար Հովսեփ Պատվականյանը, «Կարիտաս Արեգակ» հիմնադրամի զարգացման պատասխանատու Սարա Սթայթսը, PA Consulting-ի հիմնադիր Պատրիք Էլիոթը, Tokyooo ռեստորանի հիմնադիր Հիրոկի Տաչիիրին, «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամում ծրագրերի համակարգող Արմեն Բեգիջանին: Նիստը վարել է Sensyan Club-ի համահիմնադիր եւ գործադիր տնօրեն, Armenia Tree Project-ի նախկին տնօրեն, ReAnimania փառատոնի եւ RepatArmenia-ի համահիմնադիր Լուսինե Քասարջյանը:

Այնուհետ համաժողովի մասնակիցները մասնակցել են ռեսուրսների եւ հնարավորությունների ցուցահանդեսի, որտեղ ծանոթացել են Հայաստանում հնարավորություններ ստեղծող եւ փնտրող մի շարք կազմակերպությունների ծրագրերին:

Ցուցահանդեսին ներկայացված են եղել Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի Հայրենադարձության եւ ինտեգրման կենտրոնը, Ներդրումների աջակցման կենտրոնը, Հայ բարեգործական ընդհանուր միությունը, «Repat Armenia»-ն, «Move2Armenia»-ն, «Դեպի Հայք»-ը, «Դասավանդի՛ր, Հայաստան»-ը, Հայաստանի ամերիկյան եւ Հայ-ռուսական համալսարանները, «Ֆասթ բանկ»-ը, Staff.am-ը, «Շտապի՛ր դեպի բարին» եւ «Վիվա» հիմնադրամները, «Tumanyan Online» եւ «MAM» կրթական հարթակները, «ՈՄԱ»-ն, «Մատենա» միջազգային դպրոցը, «Հայ առաջադեմ երիտասարդություն», «Հզոր միտք» եւ «Հաբ Արցախ» ՀԿ-ները, «ռեԱրմենիա» հարթակը:

Օրվա ավարտին Գաֆեսճյան արվեստի կենտրոնում տեղի է ունեցել «Էթնոմշակութային երկխոսություն» խորագրով համերգային ծրագիրը:

ՍՊՈՐՏԱՅԻՆ

«ԲԱՐՍԵԼՈՆԱՆ» ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԿԼԻՆԻ

Իսպանիայի չեմպիոն «Բարսելոնայի» նախագահ Ժոան Լապորտան նշել է նոր մրցաշրջանում իսպանացի Չավիի գլխավորած թիմի առաջնահերթության մասին:

«Անցած մրցաշրջանում առաջնահերթությունը Իսպանիայի առաջնությունն էր, նոր մրցաշրջանում եւս առաջնահերթությունը կլինի Լա Լիգան: Բայց մենք կցանկանայինք ավելի լավ հանդես գալ Չեմպիոնների լիգայում եւ լինել ֆավորիտների թվում, բայց իսպանական լիգան առաջին տեղում է»,- Լապորտայի խոսքը մեջբերում է CNN-ը:

Կատալոնական թիմն անցած մրցաշրջանում նվաճել էր Իսպանիայի չեմպիոնի տիտղոսը, սակայն Չեմպիոնների լիգայում չէր կարողացել հաղթահարել խմբային փուլի արգելքը:

Իսպանիայի առաջնության մեկնարկային տուրում «Բարսելոնան» օգոստոսի 13-ին կհյուրընկալվի «Խետաֆեին»:

ՀԵՐԹԱԿԱՆ ՄԵԴԱԼԸ

Չինաստանի Չենդու քաղաքում ընթացող Համաշխարհային ուսանողական ամառային 31-րդ խաղերում Հայաստանի հավաքականը նվաճել է առաջին մեդալը: Ուշուիստ Ժիրայր Պետրոսյանը զբաղեցրել է երրորդ տեղը եւ արժանացել բրոնզե մեդալի:

Նա երկու հաղթական մենամարտ է անցկացրել եւ դուրս եկել կիսաեզրափակիչ, որտեղ պարտություն է կրել եւ բավարարվել բրոնզե մեդալով:

Այս մարզաձեւում Հայաստանի մյուս ներկայացուցիչ 70 կգ քաշային Դավիթ Վարդանյանը մեկնարկում 2:0 հաշվով առավելության է հասել Ադրբեջանի ներկայացուցիչ Մահար Ասադզադեի նկատմամբ եւ դուրս եկել քառորդ եզրափակիչ, որտեղ, սակայն, զիջել է մրցակցին եւ լքել պայքարը:

Հայաստանի թիմի անդամ, վազորդ Երվանդ Մկրտչյանը, 1500 մետր վազքատարածության որակավորման փուլում զբաղեցնելով առաջին տեղը, դուրս է եկել եզրափակիչ: Եզրափակիչ են դուրս եկել նաեւ մարմնամարզիկներ Արթուր Ավետիսյանն ու Գագիկ Խաչիկյանը: Ավետիսյանը եզրափակիչ է դուրս եկել օղակների, իսկ Խաչիկյանը՝ նժույգ թափերի վարժությունում:

Իրենց ելույթներն արդեն ավարտել են հրաձիգներ Բենիկ Խլղաթյանն ու Ջավեն Իգիթյանը՝ 10 մետր կրակոց ատրճանակ մրցումներում չկարողանալով հաղթահարել որակավորման փուլի արգելքը: 400 մետր վազքատարածությունում եզրափակիչ չի կարողացել դուրս գալ վազորդ Գայանե Չիլոյանը:

Համաշխարհային ուսանողական ամառային 31-րդ խաղերին Հայաստանը մասնակցում է 14 մարզիկով:

ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

ՄԵԴԱԼՆԵՐ՝ ԾԱՆՐԱՄԱՐՏՈՒՄ

Ռումինիայի մայրաքաղաք Բուխարեստում անցկացվող ծանրամարտի Եվրոպայի մինչեւ 23 տարեկանների առաջնությունում Հայաստանի ներկայացուցիչ Լիանա Գյուրջյանը (87 կգ) նվաճել է երկամարտի ոսկե մեդալը 221 կգ (96+125) արդյունքով: Նա առաջինն է եղել նաեւ «Պոկում» եւ «Հրում» վարժություններում:

Պետրոս Պետրոսյանը (109 կգ) նվաճել է երկամարտի արծաթե մեդալը 370 կգ (163+207) արդյունքով: «Պոկում» եւ «Հրում» վարժություններում նա եւս դարձել է արծաթե մեդալակիր:

Հայաստանի թիմն այս առաջնությունում արդեն նվաճել է 5 ոսկե, 5 արծաթե եւ 6 բրոնզե մեդալ: Երկամարտի ոսկե մեդալակիր են դարձել նաեւ 61 կգ քաշային Գառնիկ Չոլակյանը՝ 255 կգ (140+255) արդյունքով, 81 կգ քաշային Ռաֆիկ Հարությունյանը (330 կգ, 150+180), 89 կգ քաշային Սուրեն Գրիգորյանը (341կգ, 150+191) եւ 102 կգ քաշային Գարիկ Կարապետյանը (386 կգ, 118+205): Մինչեւ 20 տարեկանների պայքարում երկամարտի արծաթե մեդալակիրներ են դարձել 67 կգ քաշային Տիգրան Կարապետյանը (275 կգ, 123+152), մեծահասակների Եվրոպայի չեմպիոն Գոռ Սահակյանը (311 կգ, 140+171), Կարեն Մարգարյանը (323 կգ, 145+172) եւ Էմմա Պողոսյանը (211 կգ, 90+121):

Մինչեւ 20 տարեկանների պայքարում բրոնզե մեդալներ են նվաճել 61 կգ քաշային Մերուժան Եղոյանը (254 կգ, 110+144), 55 կգ քաշային Սեյրան Խուդանյանը (216 կգ, 95+121), 73 կգ քաշային Մարտին Պողոսյանը (308 կգ, 136+172), 59 կգ քաշային Ալեքսանդրա Գրիգորյանը (198 կգ, 86 +112), Մնացական Աբրահամյանը (313 կգ, 138+175), +87 կգ քաշային Ջուլիետա Ավանեսյանը (214 կգ, 96+118):

Հայաստանի հավաքականից Բուխարեստում մրցահարթակ դուրս կգան նաեւ մինչեւ 20 տարեկանների պայքարում Աշոտ Մովսիսյանը (+109 կգ), մինչեւ 23 տարեկանների պայքարում կլինեն Գեւորգ Ղահրամանյանը (89 կգ), Արա Աղանյանը (96 կգ), Մերի Թումասյանը եւ Լուիզա Սահրադյանը (երկուսն էլ +87 կգ):

ԿԱՆՑԿԱՑՎԻ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Երեւանը կընդունի 2023 թվականի բռնցքամարտի պատանիների աշխարհի առաջնությունը: Վարչապետի աշխատակազմից տեղեկացնում են, որ Հայաստանին է վստահվել օլիմպիական մարզաձեւերից մեկի աշխարհի առաջնությունը: Անցկացման ժամկետները դեռ հայտնի չեն: Նախատեսվում է նոյեմբեր-դեկտեմբերին: Ակնկալվում է 80-100 երկրների թիմերի մասնակցություն: Հիշեցնենք, որ այս տարվա մայիսին Երեւանում անցկացվեց բռնցքամարտի երիտասարդների Եվրոպայի առաջնությունը, 2022 թվականին էլ Հայաստանն առաջին անգամ պատմության մեջ ընդունել էր մեծահասակների Եվրոպայի առաջնությունը:

● *Օգոստոսի 8-ին «Բոհեմ» թատրոնում տեղի կունենա մոնո կատակերգություն՝նվիրված Նարեկ Դուրյանի 60-ամյակին: Տոմսերի արժեքը՝2000-5000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԱՐՏՈՆԱԳԻՐ

ՀԱՐՑ. Ինչպիսի՞ պահպանություն է տրամադրում արդյունաբերական դիզայնի արտոնագիրը:

Լիլիթ Ամոյան (29 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Արտոնագրի պահպանություն նշանակում է, որ առանց արտոնագրատիրոջ համաձայնության արդյունաբերական դիզայնն առեւտրային նպատակներով չի կարող պատրաստվել, օգտագործվել, տարածվել կամ վաճառվել: Այդ իրավունքները, սովորաբար, պաշտպանվում են դատական կարգով:

Շատ համակարգերում դատարաններն իրավունք ունեն դադարեցնել արտոնագիրը խախտող գործողությունները: Եվ հակառակը, դատարանը կարող է արտոնագիրն անվավեր ճանաչել՝ երրորդ կողմի հիմնավորված ապացույցների հիման վրա:

ՀՀ մտավոր սեփականության գրասենյակ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Արտոնագիրը բացառիկ իրավունք է տալիս արդյունաբերական դիզայնի նկատմամբ, այն պահպանում է արտոնագրատիրոջ իրավունքն արդյունաբերական դիզայնի նկատմամբ:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԲԱՆԿ

ՀԱՐՑ. Կորցրել եմ «Կոնվերս բանկ»-ի իմ պլաստիկ քարտը. ի՞նչ կարող եմ անել:

Էդիկ Քոչարյան (46 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Պլաստիկ քարտը կորցնելու կամ PIN կոդը մոռանալու դեպքում հաճախորդը մոտենում է «Կոնվերս բանկ»-ի ցանկացած մասնաճյուղ, գրում է պլաստիկ քարտի վերաթողարկման դիմում:

«Կոնվերս բանկ»

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Քարտի կորստի դեպքում կարող եք նաեւ զանգահարել «Կոնվերս բանկ»-ի թեժ գիծ՝ 010 511 211 կամ 010 440 380, 010 545 514:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

Արցախցի երիտասարդները երեկ՝ վաղ առավոտից, փակել էին Կարմիր խաչի մուտքը եւ չէին թողնում աշխատակիցներին մտնել ներս:

Նրանց միացավ նաեւ օրեր առաջ առեւանգված Վագիֆ Խաչատրյանի դուստրը, որը պահանջում էր որեւէ տեղեկություն տալ իր հոր մասին:

Ոստիկանները փորձում էին բանակցությունների միջոցով երիտասարդներին համոզել բացել մուտքը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+12 + 15 +25 + 29
Կոտայքի լեռներ	+11 + 15 +24 + 27
Կոտայքի նախալեռներ	+20 + 22 +31 + 33
Գեղարքունիք	+11 + 16 +23 + 26
Լոռի	+12 + 16 +22 + 25
Տավուշ	+16 + 20 +25 + 28
Արագածոտնի լեռներ	+13 + 15 +22 + 27
Արագածոտնի նախալեռներ	+20 + 22 +30 + 35

Արարատ	+22 + 24 +35 + 37
Արմավիր	+20 + 22 +35 + 37
Վայոց ձորի լեռներ	+13 + 15 +23 + 25
Վայոց ձորի նախալեռներ	+22 + 24 +35 + 37
Սյունիքի հովիտներ	+19 + 23 +32 + 36
Սյունիքի նախալեռներ	+15 + 17 +25 + 28
ԼՂՀ	+19 + 21 +30 + 34
Երեւան	+20 + 22 +34 + 36

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **3.8.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*